

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3748

ԹԵՄԱԿԱՆ

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԿՐՈՊԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱ. ՃՈՂՈՎՔՆ

Վարեկացուած

ԵԿՐՈՊԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱ. ՃՈՂՈՎՔՆ

1 ՅՈՒԼԻՍ 1926ԻՆ



Տպագրութիւն

Ա. Օ. ՆԵՐՍԻԿՅԱՆ — ՓՈ. ԲԵՋ

1926

281-6
թ-41

28146
թ-հ-1


ԹԵՄԱԿԱՆ

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅՈՑ

28146 3409 444

Դասերացուած
ԵՐՈՊԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱ. ՃՈՂՈՎՔՆ
1 ՅՈՒԼԻՍ 1926 Խ



Տպագրութիւն
Ա. Յ. ԿԵՐՍԻԿՈ — ՓԱ. ԲԻՋ
1926

2001

ԹԵՄԱԿԱՆ ՎԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ
ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅՈՑ

Ա. Գ. Լ. Ո. Խ.

Յօդ. 1. — Համաձայն նորին վեհափառութիւն
Տ. Տ. Գէորգ Ե. Ամենայն Հայոց Ա. Կաթողիկոսի
20 փետր. 1925 թուակիր և 79 համարաւ կոնդա-
կին, կազմակերպուած է Եւրոպայի Հայոց Եկեղե-
ցական թեմը, Սրբազն Առաջնորդին հովանաւո-
րութեան ներքեւ:

Յօդ. 2. — Եւրոպայի Հայոց Եկեղեցական թեմը
կը կազմեն այն հայաբնակ վայրերն, որոնք կը
գտնուին ճետեւեալ երկիրներու սահմաններուն մէջ՝
Ֆրանսա, Անգլիա, Պելճիքա, Հոլանտա, Զուիցե-
րիա, Գերմանիա, Աւստրիա, Իտալիա, Հունգարիա,
Զեխո-Ալօվաքիա, Եուկօ-Սլավիա, Լեհաստան եւ
Սպանիա:

Յօդ. 3. — Եւրոպայի Հայոց Եկեղեցական թեմն
իբր վարչական միութիւն կը բաժնուի հովուական
վիճակներու, հիմ ունենալով հայաշատ կեղրոնները:

Յօդ. 4. — Եւրոպայի Հայոց Եկեղեցական թեմն
ունի ճետեւեալ հովուական վիճակները մեծ քա-
ղաքներու շուրջ կեղրոնացած 1) Փարիզ, 2) Մար-
սել, 3) Լիոն, 4) Անչեսթր, 5) Լուտոն, 6) Պրիւք-
սէլ-Անվերս, 7) Ժընեվ-Լօզան, 8) Պերլին, 9) Մի-
լան, 10) Վիեննա, 11) Պելկրատ, 12) Վարշավիա,
13) Պուտափեշտ:

Յօդ. 5. — Այն հայաբնակ վայրերն որոնք հե-
ռաւորութեան կամ այլ պատճառով չեն կրնար
մտնել մերձակայ հովուական վիճակի մը մէջ, կը
կազմեն առանձինն կամ հաւաքարար Եկեղեցական
ներկայացրուցութիւն:



85911-ԱԿ

446-93 +

Յօդ. 6. — Եւրոպայի Հայոց Եկեղեցական թեմը կը գտնուի Թեմական Խորհուրդի իրաւասութեան ներքեւ, նախագահութեամբ Արքազան Առաջնորդին, որը գործադիր իշխանութիւնը կը ներկայացընէ:

Յօդ. 7. — Եւրոպայի Հայոց թեմին ենթակայ բոլոր Հոգեւոր Հովիւները և ազգային վիճակային մարմինները պարտաւոր են հնազանդիլ Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ բազմադարեան կանոններուն, աւանդութեանց ու սովորութիւններուն, և իրաւունք չունին ըստ կամս փոփոխութիւններ, նորութիւններ, կրծատումներ և յաւելումներ կատարելու Հայ Եկեղեցւոյ պաշտամունքին և ծխակատարութեանց մէջ:

Բ. Գ Լ Ո Ւ

Թեմական Ընդհանուր Ժողով

Յօդ. 8. — Եւրոպայի Հայոց Եկեղեցական թեմը ունի Թեմական Ընդհանուր Ժողով մը, բաղկացած վիճակային Ընդհանուր Ժողովի մը, բողովական ընտրուած պատգամաւորներէ, և որը Եւրոպայի Հայ Առաքելական Ս. Եկեղեցւոյ պատկանող բոլոր գաղութային Եկեղեցական համայնքներուն ներկայացուցչական ժողովն է:

Յօդ. 9. — Թեմական Ընդհանուր Ժողովի պատգամաւորներու բաշխումն ըստ վիճակներու հետեւեալն է. Փարիզ 6, Մարսէլ 5, Լիոն 4, Մանչեսթր 2, Լօնտոն 2, Պրիւքսէլ 1, Անվերս 1, Ժընէվ 1, Լոզան 1, Պերին 1, Միլան 1, Վիեննա 1, Պելլուատ 1, Վարչավիա 1, Պուտափեշտ 1:

Յօդ. 10. — Թեմական Ընդհանուր Ժողովի անդամները կ'ընտրուին վեց տարուայ պայմանաժամկ և ամէն երկու տարին 1/3ը կը փոխուի: (Տես մանրամասնութիւններն ներքին կանոնագրի մէջ:)

Յօդ. 11. — Թեմական Ընդհանուր Ժողովը կ'ունենայ տարին մէկ նատաշրջան, ամէն տարի Մարտ ամսոյ մէջ, հրաւիրուելով Արքազան Առաջնորդին կամ Մայր-Դիւանին կողմէ:

Յօդ. 12. — Ընդհանուր Հայոց Առաջնորդը:

Յօդ. 13. — Ընդհանուր Ժողովը բացառաբար նիստի կը հրաւիրուի:

ա) Մայր-Դիւանին կողմէն՝ հաւանութեամբ Առաջնորդին, կամ՝

բ) Թեմական կեդր. Խորհուրդին կողմէ, և կամ
գ) Ընդհանուր Ժողովի 10 անդամներուն գրաւոր դիմումին վրայ:

Յօդ. 14. — Ընդհանուր Ժողովի Մայր-Դիւանը չի կրնար անդամակցիլ Թեմական կեդր. Խորհուրդին:

Յօդ. 15. — Ընդհանուր Ժողովը կը մշակէ և գործադրութեան կը դնէ իր ներքին կանոնագիրը, որով պիտի կառավարուի սոյն Ժողովը:

Յօդ. 16. — Ընդհանուր Ժողովոյ պարտականութիւններն են.

ա) Կատարել Առաջնորդի ընտրութիւն,

բ) Ընտրել Թեմական կեդրոնական Խորհուրդ,

գ) Որոշել Եւրոպայի Հայոց Առաջնորդարանի տարեկան պիտուծէն և իրաքանչիւր Վիճակի այդ պիտուծէին մասնակցութեան քանակը:

դ) Քննել Թեմական կեդր. Խորհուրդի նախորդ տարւայ գործունէութեան բարոյական և նիւթական համարատուութիւնը:

ե) Լսել Առաջնորդին դէմ եղած օրինաւոր գանգատներն և հաստատուելու պարագային տալ համապատասխան որոշում, ձայներու 2/3ի մեծամասնութեամբ:

գ) Առաջնորդին հրաժարումով կամ մահուամբ Թեմական կեդր. Խորհուրդը կ'ընտրէ առաջնորդ:

դական Տեղապահ մը, որը պարտի վեց ամսուան ընթացքին Առաջնորդին ընտրութիւնը կատարել տալ:

Յօդ. 17. — Թեմական Ընդհ. Ժողովի գումարումը օրինական է երբ ընտրուած պատգամաւորներու կէսէն մէկ աւելին ներկայ են, և որոշումները կը կայանան ձայներու հասարակ մեծամասնութեամբ: Իսկ կանոնագրութեան յօդուածներու փոփոխութեան համար կը պահանջուի ձայներու 2/3ը:

Յօդ. 18. — Եւրոպայի Հայոց առաջնորդական Թեմին մէջ գտնուող հայ եկեղեցական շարժուն և անշարժ բոլոր հարստութիւնները սեփականութիւնն են Հայ Առաքելական Ս. Եկեղեցւոյ և այդ իրաւունքը պէտք է ապահովել երկրին օրէնքներուն համաձայն:

Գ. Գ Լ Ո Ւ Խ

Թեմական Կենդրոնական Խորհուրդ

Յօդ. 19. — Եւրոպայի Հայոց Եկեղեցական Թեմին Վարչական մարմինն է Թեմական Կեդրոնական Խորհուրդը, որ կ'ընտրուի Ընդհ. Ժողովէն երկու տարուան շրջանով, բաղկացած է 11 անդամներէ, որոնք վերընտրելի են և որուն նախագահն է թեմին Սրբազն Առաջնորդը:

Յօդ. 20. — Թեմական Խորհուրդը կը վարէ Եւրոպայի Թեմին ընդհանուր հոգեւոր, կը թագավան, վարչական ու տնտեսական գործերը. իր պարտականութիւններն են.

ա) Հսկել ժողովրդեան հոգեւոր պէտքերուն անթերի գոհացման,

բ) Զանալ հաստատել ուր որ չկան եկեղեցիներ ու կրթարաններ և հետեւիլ թեմին բոլոր եկեղեցական և կրթական բարեկարգութեան:

գ) Պահպանել ազգային սովորութիւնները:

4/8

մասնաւորապէս մայրենի լեզուն ու աջակցիւ ամէն ձեռնարկի, որ սոյն նպատակին կը ծառայէ:

դ) Յառաջ բերել հանրային եւ անհատական նուիրատուութիւններ եւ այլ միջոցներ, ի նըպաստ թեմական կեղոր, մնտուկին և հաստատել եկեղեցական-կրթական տարեվճար իւրաքանչիւր ազգայինի վրայ:

ե) Մշակել թեմի ելեւմուտքի նախահաշիւը և առաջարկել ի հաստատութիւն Թեմական Ընդհ. Ժողովին:

զ) Ապահովել Առաջնորդարանի նիւթականը:

ի) Հսկել եկեղեցական մատեաններու կանոնաւորութեան և կազմել տարեկան տեղեկագիր ծննդեան, ամուսնութեան, մահուան և մարդահամարի:

ը) Պատրաստել տեղեկագիր տարեկան գործունէութեան Թեմական Ընդհ. Ժողովին ներկայացնելու համար:

Յօդ. 21. — Թեմական Խորհուրդին դիւանը կը կազմեն Ատենապետը, Փոխ-Ատենապետը, Ատենապետը և Գանձապետը, որոնք կ'ընտրուին Թեմական Խորհուրդի անդամներէն:

Յօդ. 22. — Թեմական Խորհուրդը կ'ընտրէ օժանդակ մարմիններ, մասնաւոր պէտքերու առթիւ և անոնց իւրաքանչիւրին ատենապետ կը նշանակէ իր անդամներէն մէկը:

Դ. Գ Լ Ո Ւ Խ

Թեմական Առաջնորդ

Յօդ. 23. — Եւրոպայի Հայոց Առաջնորդը կ'ընտրուի Եւրոպայի Թեմին Ընդհանուր Ժողովէն և կը տեղեկագրուի Ամենայն Հայոց Վեհ. Հայրապե-

տին, ստանալու համար չայրապետական կոնդակ:

Յօդ. 24. — Թեմակալ Առաջնորդին տեսչութեան տակ կը գտնուին բոլոր հոգեւոր հովիւները. քահանաները և Եւրոպայի թեմին մէջ գտնուող բոլոր հայ հոգեւորականները:

Յօդ. 25. — Առաջնորդին աթոռավայրն է Փաքիզ. անոր բացակայութեան՝ Թեմական կեդրոնական Խորհուրդին կը նախագահէ առաջնորդական Փոխանորդը, որ կ'ընտրուի Առաջնորդին կողմէ:

Ե. Գ Լ Ո Ւ Խ

Կրօնական ժողով

Յօդ. 26. — Կրօնական ժողովը կ'ընտրուի Եւրոպայի Հայոց Թեմական Ընդհ. ժողովէն, կը բաղկանայ հինգ անդամներէ և երկու տարուան շրջանով, որոնք վերընտրելի են:

Յօդ. 27. — Կրօնական ժողովոյ նախագահն է թեմակալ Առաջնորդը:

Յօդ. 28. — Կրօնական ժողովոյ բնական անդամ կը համարուին Եւրոպայի Հայոց հովուական վիճակներու հոգեւոր հովիւները, երբ Փարիզ կը գտնուին:

Յօդ. 29. — Կրօնական ժողովը նախագահութեամբ Սրբազն Առաջնորդին, իրաւասու է դատելու ամբաստանեալ եկեղեցականները:

Զ. Գ Լ Ո Ւ Խ

Դատաստանական Ատեաններ

Յօդ. 30. — Ամուսնական վէճերը կը քննուին Դատաստանական Խորհուրդին կողմէ, որ կը բաղկանայ թեմական կեդր. Խորհուրդէն լնտրուած երկու կրօնական և երկու աշխարհական անդամներէ, որուն պաշտօնն է իրեն յանձնուած տեղեկագիրներու վրայ ամուսնական դատերը լուծել և պատճառարնեալ վճիռը արձակել, քննելով թուղթերը, ի հարկին լսելով երկու կողմերը և կատարելով իր յարմար դատած քննութիւնները:

Քարտուղար մը, որ Նախագահին հետ միասին պատասխանատու է արձանագրութեանց և որ Նախագահին հետ պիտի ստորագրէ և որ հուրհուրդին ամուսնական խնդիրներու վերաբերեալ տեղեկագիրները:

Յօդ. 31. — Դատաստանական Խորհրդոյ պարտականութիւնն է իր քննութեան յանձնուած խնդիրներու մասին երկու կողմերը լսել, հարկ եղած քննութիւնները կատարել և եզրակացութիւնը տեղեկագրել Ս. Առաջնորդին:

Յօդ. 32. — Սոյն տեղեկագիրները Ս. Առաջնորդին կողմէ կը յղուին Ատեանի մը, որ կը բաղկանայ Թեմական Խորհուրդէն լնտրուած երեք կրօնական և երեք աշխարհական անդամներէ, որուն պաշտօնն է իրեն յանձնուած տեղեկագիրներու վրայ ամուսնական դատերը լուծել և պատճառարնեալ վճիռը արձակել, քննելով թուղթերը, ի հարկին լսելով երկու կողմերը և կատարելով իր յարմար դատած քննութիւնները:

Յօդ. 33. — Սոյն Ատեանին վճիռները կը զըրկուին Ս. Առաջնորդին, որ կամ կը հաստատէ զայն և կամ ի հարկին կը վերադարձնէ Ատեանին, կը լին քննուելու համար:

Յօդ. 34. — Եթէ Նախադատ Ատեանը յետ կրկին քննութեան իր նախորդ որոշման վրայ պնդէ, այն ատեն Ս. Առաջնորդը կամ կը վաւերացնէ և կամ կը ներկայացնէ ն. Ս. Օծութեան Ամենայն Հայոց Հայրապետին բարձրագոյն վճուն:

Յօդ. 35. — Դատաստ. Խորհուրդը և Նախագահ Ատեանը կ'ընտրուին երկու տարուան համար, եւ վերընտրելի են:

Ե. Գ. Լ. Ո. Խ. Խ

Վիճակային Ընդհանուր Ժողով

Յօդ. 56. — Իւրաքանչիւր Վիճակ ունի իր Հնդկանուր Ժողովը, որուն մասնակցելու կը հրաւիրուին այն երկսեռ ազգայինները, որոնք արձանագրուած են եկեղեցւոյ մատեանին մէջ եւ յօգուտ եկեղեցւոյ իրենց տարեվարը տուած են եւ լրացուցած 20 տարին:

Յօդ. 57. — Վիճակային Հնդկ. Ժողովը կը գումարուի տարին առնուազն մէկ անգամ յատուկ հրաւիրազրով:

Յօդ. 58. — Վիճակային Հնդկանուր Ժողովը կը զբաղի Վիճակին եկեղեցական, կրթական, վարչական եւ մատակարարական գործերով:

Իր գլխաւոր պարտականութիւններն են.—

ա) Բնտրել եւ արձակել տեղական Հոգեւոր Հովիւնները եւ ենթարկել թեմական Առաջնորդին վաւերացման:

Մանօթ. — Հոգեւոր Հովիւններու ընտրութիւնը կը կատարուի թեմական Կեդրուսական Խորհուրդին զըրկուած եւ ապագատիկ ցանկի մը վրայէն, սակայն Վիճակային ընդէ. Ժողովները կրնան այդ ցանկէն գուրս հոգեւորականներ եւս ընտրել Առաջնորդին վաւերացմանը ենթարկելու պայմանաւ:

բ) Բնտրել Վիճակային Խորհուրդ,

գ) Քննել Վիճակային Խորհուրդի տարեկան բարոյական եւ նիւթական գործունէութեան համարատուութիւնը,

դ) Խորհրդակցիլ Վիճակին Հնդկանուր հոգեւոր պէտքերուն մասին,

ե) Վիճակային Հնդկանուր Ժողովոյ նախագահն է տեղւոյն հոգեւոր հովիւր:

Հ. Գ. Լ. Ո. Խ. Խ

Վիճակային Խորհուրդներ

Յօդ. 59. — Հովիւրական Վիճակներու գործերը կեղրոնացած են Վիճակային Խորհուրդներու մէջ, որոնք բաղկացած են 5-7 անդամներէ, նախագահութեամբ հոգեւոր հովիւններու:

Յօդ. 40. — Վիճակային Խորհուրդներու անդամները կ'ընտրուին Վիճակներու Հնդկանուր Ժողովներէն երկու տարուան համար:

Յօդ. 41. — Վիճակային Խորհուրդներու պարտականութիւնները գլխաւորաբար հետեւեաններն են. —

ա) Հոգեւոր Վիճակին եկեղեցիններուն բարեգարդութեան եւ հոգեւոր մատակարարութեանց անթերի կատարման,

բ) Կազմել տեղական ելեւմուտքի տարեկան նախահաշիւր,

շ) Ապահովել հոգեւոր հովիւրին եւ քահանաներուն նիւթականը,

դ) Եկեղեցական շարժուն եւ անշարժ գոյքերու շահաւէտ տնտեսութիւնը ապահովել,

ե) Իւրաքանչիւր Վիճակի հայաշատ կեղրոններու մէջ հաստատել մանկապարտէզ-նախակրթարաններ,

շ) Կեղրոնէն ղրկուած Վիճակագրական մատեաններու մէջ արձանագրել ծնունդները, ամուսնութիւնները եւ մահերը ու կազմել մարդաբամարի կանոնաւոր տոմարներ:

կ) Տարեկան տեղեկագիրներ ներկայացնել թեմական կեղր. Խորհուրդին, իր գործառնութեանց մասին առ ի գիտութիւն,

ը) Վիճակին տարեկան եկամուտէն բաժին հանել թեմական կեղր. մնատուկին,

3405

թ) Ներկայացնել բարոյական եւ նիւթական համարատութիւն Վիճակային Ընդհ. Ժողովին:

Մանօք . — Հոգուական Վիճակները կերպով թեմական Վարչութեան և Առաջնորդին կապուած ըլլալով և ընդհանուր շղթային մէկ օղակը կազմելով հանդերձ, կը կառավարուին իրենց վիճակային գործերուն մէջ իրենց ներքին յատուկ կանոնագիրներով, պայմանաւ որ ասոնք չի հակասեն ներկայ կանոնագրի եկեղեցական հիմնական սկզբունքներուն:

Յօդ. 42. — Հոգուական Վիճակներու մօտաւոր եւ հեռաւոր բոլոր հայաբնակ տեղերու մէջ կը կազմուին Հոգաբարձութիւններ, որոնք Վիճակային Խորհուրդներու պարտականութիւններն ունին եւ ենթակայ են Վիճակային Խորհուրդին:

Թ. Գ. Լ. Ո Ւ Խ

Եկեղեցական Ներկայացուցիչներ

Յօդ. 43. — Եկեղեցական Ներկայացուցիչները կ'ընտրուին տեղական համայնքին կողմէ. իսկ ուր որ ծխական համայնքը ցրուած ըլլալով հնարաւորութիւն չունի հաւաքարար գործելու, կը նշանակուին Ս. Առաջնորդին կողմէ:

Յօդ. 44. — Եկեղեցական Ներկայացուցիչները պարտաւոր են հաշիւ տալ իրենց գործունէութեան մասին ուղղակի կեղծոնին:

Յօդ. 45. — Եւրոպայի Հայոց թեմական սոյն կանոնագրութիւնը 6 ամիսէն առաջ վերաքննելի չէ:

Յօդ. 46. — Ներկայ պատգամաւորական ժողովին բացառիկ պաշտօնը կը վերջանայ այս շլջանին, անմիջապէս որ իր օրակարգին վրայ գտնուած խնդիրները լուծէ, սոյն կանոնագիրը պատրաստէ եւ թեմական Խորհուրդին ու Առաջնորդի ընմրութիւնն կատարէ:



«Ազգային գրադարան»



NL0030591

KK

3633